ՀՏԴ 82-9
Գրականագիտություն

Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ , Գրականության և ժուռնալիստիկայի
ամբիոնի դոցենտ, բ. գ. թ.

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ / 200
ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ և ՄԵԾ ՀԱՅՔԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆԱՀԱՆԳ ԱՐՑԱԽԸ

«Արցախ» երկն ունի խիստ քաղաքական, գրապատմական, գեղագիտական ուղղվածություն-խնդրակարգ, հայրենագիտական-ուսուցողական, ազգային-գաղափարաբանական ծրագրայնություն, մելիքական-իշխանական տների ու նրանց փոխհարաբերությունների խորը բացահայտումներ, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների քննման անհերքելի ապացույցներ, կերպարների համոզիչ և սպառիչ բնութագրումներ, տեղագրական, իրավական համակարգի փաստացի շարադրանք, արցախցիների բազմաբովանդակ կյանքի՝ հերոսական անցյալի, մահտարաժամի, կորուստների և ձեռքբերումների, պարտությունների և հաղթությունների անսխալական պատկերավորում, ստեղծագործ մեծ հանճարի փայլատակումներ, գիտական կառուցվածք և արդիական հնչողություն, ինչն իրավամբ կարող է տարածաշրջանում հնչող բազմաբնույթ մարտահրավերներին ընդհառաջ անխորտակելի գիտական արժեք հանդիսանալ:

Բանալի բառեր՝ *Մեծ Հայք, Վենետիկի Մխիթարյան միաբանություն, Քիրս, Գյուլիստան, Գանձասար, Դիզապայտ, Վարանդա, Ծար, Ականա, Աղվանք*

З. Балаян

ГЕВОНД АЛИШАН / 200
ГЕВОНД АЛИШАН И ДЕСЯТАЯ ПРОВИНЦИЯ ВЕЛИКОЙ АРМЕНИИ АРЦАХ

Произведение «Арцах» имеет сильную политическую, библейскую, эстетическую направленность-проблематику, патриотически-воспитательную, национально-идеологическую нацеленность, содержит глубокие разоблачения княжеских домов и их отношений, неопровержимые доказательства для изучения духовных и светских властей, убедительные и исчерпывающие описания персонажей, фактическое описание местной правовой системы, непогрешимое изображение многогранной жизни народа Арцаха: героическое прошлое, потери, завоевания, победы

великого творческого гения. Произведение имеет четкую научную структуру и современное звучание. Все это по праву может представляться неопровержимой научной ценностью перед лицом различных вызовов, озвучиваемых в регионе.

Ключевые слова: *Великая Армения, Мехитаристская Конгрегация Венеции, Кирс, Гюлистан, Гандзасар, Дизапайт, Варанда, Тсар, Акана, Агванк*

Z. Balayan

GHEVOND ALISHAN AND THE TENTH PROVINCE OF GREATER ARMENIA ARTSAKH

The work "Artsakh" has a strong political, biblical, aesthetic, patriotic-educational, national-ideological orientation, contains deep exposures of princely houses and their relations, irrefutable evidence for the study of spiritual and secular authorities, convincing and comprehensive descriptions of characters, an actual description of the local legal system, the infallible image of the multifaceted life of the people of Artsakh: the heroic past, losses, gains, victories of the great creative genius. The work has a clear scientific structure and modern sound. All this can rightfully be represented as an undeniable scientific value in the face of various challenges raised in the region.

Keywords: *Great Armenia, Mechitarist Congregation of Venice, Qirs, Gulistan, Gandzasar, Disapait, Varanda, Tsar, Akana, Agvank*

Համապարփակ, ֆենոմենալ գիտական իմացությունների տեր, քանքարաշատ ու վաստակաշատ հայագետ, բանաստեղծ, գրող, փիլիսոփա, աշխարհագրագետ, թարգմանիչ, աշխարհագրական ուղղության հետևորդ, հռչակավոր Մխիթար Սեբաստացու աշակերտ Ղևոնդ Ալիշանը, ինչպես իր բազմաբնույթ երկերում, նույնպես փոքրածավալ, բայց մեծարժեք «Արցախ» երկում հատկանշել է Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից տասներորդը՝ Արևելից կողմանքը՝ Արցախը, իր տասներեք գավառներով հանդերձ՝ Կողթը, Բերդաձորը, Վայկունիքը, Սիսական ոստանը, Մեծկունիքը, Մեծիրանքը, Փառնեսը, Մյուս Հաբանդը, Պարզկանքը, Մուխանքը, Հարժլանքը, Պիանքը, Քոտակը: Հետևելով պատմիչների, ժամանակագիրների տված տեղեկություններին՝ Ալիշանը լուսաբանում է միտքը հետևյալ մեկնաբանությամբ. «Հայոց նախնիների իշխանության ժամանակ Արցախը տասներկու կամ ավելի գավառների էր բաժանվել….»[1]:

Հեղինակը երբեք չլինելով Հայաստանում ու նրա գավառներում, զբաղվելով հայ և օտար աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ,

---

[1] ***Ալիշան Ղևոնդ***, *Արցախ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1993 (այսուհետև՝ Ղևոնդ Ալիշան, Արցախ), էջ 9:*

հետևողականորեն ու նախանձախնդիր պատասխանատվությամբ ու հայրենագիտական մղումներով զինված՝ հետամուտ լինելով իր նպատակների, ծրագրերի կյանքի կոչելուն՝ կարողացել է ի մի բերել իր կուտակած գիտական հարուստ նյութը և քննադաշտ բացել, ստեղծել Հայաստանին ու նրա բազմաբովանդակ պատմությանը նվիրված կոթողների շարք, որի մայր երակում իր առանձնահատուկ տեղն ունի գիտապատմական, վիպագրական, բանագիտական, աղբյուրագիտական հենքով շաղախված «Արցախը», որի՝ մեր կողմից կատարած համակողմանի գրականագիտական քննության անդրադարձը առաջին փորձը կարելի է ընդունել հայ գրականության մեջ:

Ղևոնդ Ալիշանն Արցախի գավառների քննությունն ու մեկնաբանությունները կատարում է՝ հենվելով ձեռք բերած հարուստ փորձի, նաև տեղագրական, պատմական, բանագիտական և այլևայլ կարգի հարուստ գիտելիքների հիման վրա, կենտրոնանալով նրանց աշխարհագրական, պատմական միջավայրի բացահայտմանը, այդ ամենին ավելացնելով իր վառ երևակայությունն ու ստեղծագործելու անուրանալի, բարձրակարգ շնորքը, աներևակայելի տաղանդը: Նրա գրչի տակ անձնավորվում են Արցախի մելիքները, հոգևոր և աշխարհիկ առաջնորդները, մելիքական տներն իրենց առանձնահատկություններով, պատմական դիմագծով, մղած կռիվներով, ազատասիրության, հայրենապահության յուրովի դրսևորումներով, գավառներն իրենց յուրահատկություններով, ծննդաբանությամբ, տոհմական գծերով, արաչագործ ձեռնարկություններով, բնությունն իր հարուստ նկարագրով և այլն...

Արցախի գավառների քննության համակարգում իր գրապատմական, քաղաքական, աշխարհագրական, բնակլիմայական, տեղագրական նկարագրով, ծագումնաբանությամբ, արտաքին հարաբերություններով, ազգային մտախառնվածքով առանձնանում է **Գյուլիստան-Ռոսաստակը, Չարաբերդը (Չլաբերդ), Մեծ Կողմանքը, Սիսական գավառ-Ղայնաղը, Մեծիրանք-Կսապատը և այլ գավառներ:**

Գյուլիստան-Ռոսաստակ

Արժեքավոր են նաև Ալիշանի անդրադարձները պատմական Գյուլիստանի ու նրա անվան ծագման և Թալիշի մասին, որոնց վերաբերյալ նա տեղեկություններ քաղել է նաև թե՛ Ս. Ջալալյանից, թե՛ մի խաչվեմի արձանագրությունից.

110. «Կուրանի և Թարթառի միջով,- գրում է Ալիշանը,- հոսում է ձկնաբեր (կարմրախայտ) Ինճե գետը, որը, ինչպես **ինձ թվում է**, բխելով Մռավի արևելյան բլուրներից, անցնում է Ուտիքի ճևանշիր գավառը:

…. Միջին դարերում, երբ այլազգիները իրենց ձեռքը գցեցին այս տարածքը, այն կոչվում էր Գյուլիստան, որպես և մինչև օրս է կոչվում, գետի ձախ ափին գտնվող բերդավանի հետ միասին, որն ընկած էր Ագճաքենդ գյուղերից հարավ:

Խթրավանքի մի արձանագրությունում Գոլաստյան է կոչվում: Ասվում է նաև ԺԲ դարի սկզբի այդ կողմերի իշխան, արքայազն-իշխան Վասակի մասին, որը, գնալով այնտեղ, ազատում է այն օտարների ձեռքից և այնտեղ բնակեցնում իր որդուն: Այնտեղ բերվում է մի մեծ խաչվեմ, որի վրա էլ արձանագրվում է այս բանը:

Արցախում, Ինճեի հովիտներում, ըստ Ջալալյանի, դեպի ձորամեջ ընկած գետափին, նշվում են ճգնավորների՝ Ռադիպեկի անունով ամայի վանքը, իսկ գավառի սահմանում, Գյուլիստանից ավելի հյուսիս-արևելք՝ Թալիշ գյուղավանը» ….»[1]:

Չարաբերդ (Չլաբերդ), Մեծ Կողմանք գավառները

Քննելով Արցախի կեսը զբաղեցնող Չարաբերդ կամ Չլաբերդ մեծ գավառի մասին եղած բազմաբնույթ տեղեկությունները՝ Ալիշանը գտնում է, որ այն հին ժամանակներում ամուր բերդ էր՝ հիշատակված Է դարի սկզբից, և որ ըստ Արցախի վաղնջնական պատմության՝ բուն Չարաբերդը Քուստի-Փառնեսի կամ մանավանդ Մեծ Կողմանք գավառի մի մասն է, որի հարավային մասը Մեծիրանք կամ Մեծունիք գավառն է, հետագայի բուն Խաչենը՝ հայտնի որպես Մեծկունիք: Այն Արցախի շատ մարզերից ավելի նշանավոր էր՝ բնակեցված քաջ ու արիական մարդկանցով, որից էլ ստացել էր իր Մեծիրանք անունը:

«**Եվ սա**,- գրում է Ալիշանը,- **ըստ իր գրված դիրքի Միջնարցախ գավառ է կոչվում: Այն ուներ հին և առանձին եպիսկոպոսարան Տաղձանք կոչված տեղում: Հիշատակվում են հետևյալ եպիսկոպոսները՝ Զ դարի կեսին Ղևոնդը, Է դարի կեսին Դավիթը, նրա հաջորդ Իսրայելը, Միսայելը, Դավիթը, որը 768 թ. կաթողիկոս նշանակվեց, Հովսեփը, որը 848 թ. կաթողիկոս նշանակվեց, Սամվելը, որը 878 թ. կաթողիկոս նշանակվեց, Սահակը, որը կաթողիկոս էր Ժ դարի կեսին…. Թ դարի կեսին Մեծ կողմանքի կես մասին իշխում էր քաջ Աբու Մուսեն, որը հերոսացավ Քշիթ լեռան վրա….,** ընդգծ.՝ Զ. Բ. »[2]:

Վիպախառն անցումներով, հետաքրքիր երանգներով հյուսվածքներ են պահպանվել Աբու Մուսեի հերոսական կռիվների շուրջ՝ ընդդեմ

---

[1] *Նույն տեղում, էջ 37-38 :*

[2] *Նույն տեղում, էջ 38-39 :*

անագորույն, մահտարաժամ սփռող, անգութ ու խարդախ Բուղայի և նրա հորդահոս հորդաների:

Սիսական գավառ-Ղայնաղ

Թե ինչ աշխարհագրական վայրում է տարածված Սիսականը և աշխարհագրական ինչ սահմաններ է ընգրկում՝ կարևորելով նրա դերն Արցախում՝ Ալիշանը առանձնանշում է հետևյալը.

116. «Այն երկիրը, որ տեղադրված է արևմուտքից Մեծ-կողմանքի, իսկ արևելքից Վայկունիքի միջև, և որի միջով երեք վտակների միավորումից հետո սահմանով իջնում է Թարթառ գետը դեպի հարավ մոտ 12 մղոն, հետո թեքվում դեպի արևելք, պետք է Արցախի Սիսական գավառը լինի, նույն ինքը **Սիսական ոստանը և Սիսական գավառը,** որը այդպես է կոչվում Սյունիքին մոտ լինելու պատճառով: Նրան հարավից սահմանակից է Խաչեն գետի սկիզբը, որի հարավում էլ գտնվում է **Հաբանդ գավառը»**[1]:

Հաբանդ գավառը միջնադարում Խաչենի վերին մասն ու Հանդաբերդի տերերի ժառանգություն էր համարվում: **Ղայնաղ** երկրի տեղադրության ու անվանակոչության շուրջ ենթադրաբար քննումներ-բացահայտումներ կատարելով՝ Ալիշանը գրում է. «Մեր նախնիները Սիսական գավառում այդ անունով շեն բոլորովին չեն հիշատակում, բայց այդ նույն **Ոստան** անունը հուշում է, որ այդտեղ վաղնջական ժամանակներից սիսական իշխանների կողմից պետք է հիմնադրված լինի մի հզոր քաղաք կամ դղյակ: Ոչ մի տեղ չի հիշատակվում երկրամասի գավառական նոր անունը: Այն **Ղայնաղ** երկիրն է, որի հետ միասին կաթողիկոս Եսայի Ջալալյանը հիշում է Չարաբերդի վրա իշխող մի Բեկի, որը լեկերի պատճառով փախչում է նրա թիկունքում գտնվող Ծար երկիրը: Գավառում նշվում են Մռավի հարավից և Յանշախի սկզբից **Քեշիքենդը,** սրանից հարավ **Աղտավանը**, սրանից էլ հարավ Թարթառի մոտ՝ Շապոն, սրա ելքի հյուսիսային կողմում՝ Ուռաթաղը, արևմուտքից, վերջինի աջ կողմում, գետի հարավում՝ **Քոզտուն** կամ **Քոստին** »[2]:

Վերին Խաչենի իշխանների օրոք (ԺԲ-ԺԴ դդ.) ծաղկման էր հասել նրանց գահ ու ամրոց հանդիսացող Հաթերքը, որը ուներ **Հայթերք** ու **Խաթերք** գրության ձևերը: Հաթերքը գտնվում է Թարթառի ափին: Ի տարբերություն սահմանամերձ շրջաններից շատերի՝ Հաթերքի իշխանը ավելի պատվավոր էր: Իր ասելիքը հստակեցնելու և փաստացի դարձնելու համար Ալիշանը այս հարցում վկայակոչում է Մ. Գոշի և Կ. Գանձակեցու երկերը.

---

[1] *Նույն տեղում, էջ 47 :*

[2] *Նույն տեղում, էջ 48 :*

«….ինչպես որ մեզ հնարավորություն է տալիս գուշակելու Մխիթար Գոշը իր **Դատաստանագրքի** հիշատակարանում, 1184 թ. «Խաչենի կողմերում քիչ թվով իշխաններ մնալու ժամանակ, կրոնավոր Վախթանգի Հասան անունով որդու և նրա որդի Վախտանգի ժամանակներում Հաթերք անունով դղյակին տիրում էին այլ իշխաններ[1], որոնց և ինքն ապավինել էր՝ նեղվելով Գանձակի տաճիկներից, Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի սադրանքներից, ինչպես որ ցույց է տալիս Կիրակոսը»[2]: Հաթերքի հետագա ճակատագրի մասին իր քննությունն Ալիշանը կատարում է՝ վկայակոչելով Դավրիժեցու «Հայոց պատմությունը». «Հետագայում այդ տեղի մասին հիշատակում է Առաքել պատմիչը, որն ասում է, որ 1576 թ. այլ գաղթականների հետ Հաթերք գյուղից Պարսկաստան են չվում եղբայրներ Օղլան քեշիշը և Ղարաբեկը: Այժմ մի գեղեցիկ եկեղեցի կա Հաթերքում, որտեղ պահվում է մի անվանի խաչ տեղի անունով»[3]:

Արցախի Խաչեն գավառը հիշատակվում է 4-րդ դարից, որի Խաչյանք տոհմանունի մասին տեղեկություններ են պահպանվել Ներսես Մեծի և Արշակունյաց արքաների գահնամակում: Միջնադարում Խաչենի մելիքները իրենց իշխանության տակ ներառեցին նաև Թարթառի հյուսիսային կողմերի գավառները՝ հասնելով մինչեւ Գեղամա ծովի ափերը և Չրբերդի **(Չարաբերդ)** ամբողջ գավառը: Այնուհետև այդ երկրամասը կոչվեց **Փոքր Սյունիք**:

Խաչենի միջնամասը և հարավային կողմերը գլխավոր բնակավայրի անունից ստացան Խաչենք կամ Խաչենի երկիր հատուկ անունները: Խոսքը վերաբերում է **Ներքին Խաչենին:**

Ազգային հոգևոր և մշակութային, քաղաքական կյանքում խաղացած մեծ դերի համար Ալիշանը բարձր է գնահատում Խաչեն աշխարհը՝ Արցախի նահանգների մեջ նրան պատվավոր տեղ վերապահելով, վկայակոչելով աշխարհագիր Վարդան Վարդապետի բառացանկում վերջինիս տված արժեքավոր հետևյալ բնութագիրը. «Խաչենը սուրբ Կարապետի գլուխն է, Գանձասարն է»[4]: Ալիշանի կարծիքով, դա վկայում է այն մասին, որ «այնտեղ է եղել երկրամասի կենտրոնը, այսինքն՝ Խաչենի բերդը, թեև այժմ անհիշատակ է: Գանձասարի ՉԻ (1271) թ. մի արձանագրությունում այն կոչվում է **Սուրբ Խաչեն,** որը ապացուցում է, որ այն իր անունն

---

[1] ***Մխիթար Գոշ***, *Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 25 :*

[2] ***Կիրակոս Գանձակեցի***, *Պատմութիւն Հայոց, Երևան, 1961 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), էջ 209 :*

[3] ***Ալիշան Ղևոնդ***, *Արցախ , էջ 49 :*

[4] ***Վարդան Վարդապետ***, *Աշխարհացոյց, Փարիզ, 1960, էջ 11 :*

ստացել է սուրբ Փայտից քրիստոնեության առաջին դարերում, սուրբ Մեսրոպից ավելի առաջ»[1]:

Վավերագրերում հիշվում է նախ Խաչենի բերդը:

Այս տոհմի պայազատները բարգավաճման հասան 9-րդ դարում: Բարձրատոհմիկ իշխանական տան հետագա ճակատագիրը դրամատիկական է դառնում, որտեղ իր քաղաքական ակտիվ պահվածքով երևում է Ալիշանի հերոսներից մեկը՝ Վարազ Տրդատի խելամիտ ու կորովի կինը, ով ընտանիքի ավանդույթների ու հետագա նրա ճակատագրի պահպանման ջատագով է ներկայացված: Հետագայում «Աղվանքի իշխան Վարազ Տրդատի կինը,- գրում է Ալիշանը,- դավադրությունից խուսափելով, «առնում է իր մնացած դստերը՝ Սպրամին (կամ Ապրսամիկին) և գիշերով մեծ դժվարությամբ մտնում է Խաչենի բերդը… Սպրամին ամուսնացնում է Սահլի որդի Ատրներսեհի հետ, որը Հայկազյանց տոհմից էր և Սյունիքի տերը», որի սերունդները հասան արքունական աստիճանի Սյունիքում և Արցախում, որտեղ կոչվեցին Փառիսոսի թագավորներ »[2]:

Եվ այդ ցեղից ուրիշները Խաչենի իշխաններ ու պայազատներ դարձան, որոնցից հիշվում է ոմն Գրիգորը Ժ դարի կեսին: Հայկական Մակեդոնական հարստության կայսր և պատմիչ Կոստանդին Ծիրանածին Պորֆյուռիեն իր պատմության մեջ հիշատակում է X դարի կեսին հռչակ ձեռք բերած, Անանիա կաթողիկոսի կողմից հյուրընկալված նշանավոր Խաչենի տեր Գրիգորին, որին մեծաշուք իշխանների շարքն է դասում:

Ալիշանը, համապատասխան տեղեկություններ քաղելով վիմագիր արձանագրություններից և պատմիչների վկայություններից, Վերին Խաչենի տոհմը կոչում է **Դերսումյանք,** իսկ երկրորդը՝ **Սակոյանք**, քանի որ XII դարասկզբին Խաչենի իշխանները բաժանված էին երկու գլխավոր տոհմի: **Դերսումյանց ազգակիցները երևացին մինչև ԺԶ** դարի կեսը, **Սակոյանցը՝ մինչև ԺԳ և ԺԴ** դարերը, որից հետո երկու տոհմերը կոչվեցին մի անունով՝ **Հասան-Ջալալյան տոհմ**: Այդ տոհմից էլ հետագայում նշանակվեցին Աղվանքի կաթողիկոսներ: Վերին Խաչենում ընդգրկված էին Վայկունիքը և Սիսականը, գահը պահվում էր Հաթերքում, իսկ մյուսի՝ Ներքին Խաչենի գահանիստը Խաչենաբերդ էր:

Ալիշանը, Խաչենի պայազատներին ու նրանց վարքը, արիավառ ու հայրենասիրական նկրտումները գովաբանելով, հայրենիքի ամբողջականությունը պահպանելու համար օսմանցիների և պարսիկների

---

[1] ***Ալիշան Ղևոնդ***, *Արցախ, էջ 61-62 :*

[2] ***Ալիշան Ղևոնդ***, *Արցախ, էջ 62 :*

դեմ վարած կռիվների դերը գնահատելով՝ նրանց կերպավորումները վիպական գեղեցիկ գծերով է ներկայացնում, անվանում նրանց **«հզոր և իշխանավոր մարդիկ»**[1], նշում մելիքների ռուսամետ և պարսկամետ կողմնորոշումները:

Ալիշանը ցավով է նկարագրում թշնամիներից՝ Փալտունից, Ելտկուզից, Գանձակի Չավլի իշխանից, թաթարներից՝ Խաչենին հասած ծանր ավերածությունների, սրածությունների, ապա նաև՝ խաչենցիների միահամուռ պայքարի մասին՝ ընդդեմ արյունռուշտ թշնամյաց. «Դրանցից հետո իշխանները հզորացան, գերազանցեցին թաթարներին և իրենց ցեղը խառնեցին ժամանակի ազնվագույն տոհմերի՝ Կորիկյանների, Բաղացիների, Զաքարյանների և Քուրդյանների հետ»[2]:

Ներքին ընդգծված զայրույթով հեղինակը նկարագրում է նաև Ղարաբաղի արյունարբու խաների՝ Փանահի, Իբրահիմի, Մեհտի Ղուլիի՝ արցախցիներին, Արցախի մելիքություններին բերած չարագործությունների, Ղարաբաղի մելիքներին երկպառակելու, Ղարաբաղի խանության ստեղծման մասին՝ որոշ հարցերում ոչ ճիշտ մեկնաբանումներ տալով (Փանահի մահվան և որդու՝ Իբրահիմի իշխանության տարիների սկիզբը՝ 1789 և 1790թթ., ճիշտ չեն տեղադրված. Փանահը սպանվել է 1762թ. Քերիմ խանի կողմից՝ Շիրազում (Ռաֆֆի, Լեո), և ապա՝ ոչ էլ Շուշին իր անունը գյուղից էր ստացել, ոչ էլ քաղաքը կոչվել էր Փենապատ:

Պատմական աղբյուրները Շուշիի կառուցման մասին ավելի հին ժամանակների տեղեկություններ են հաղորդում)[3]. «Նադիր շահի կողմից հալածված թաթարները,- գրում է Ալիշանը,- երբ Խորասանից վերադառնում են այստեղ, ունենում են ճեվանշիր տոհմից Փանախան անունով մի թուրքմեն առաջնորդ: Սա տիրեց Ղարաբաղին, նվաճելով երկրի հինգ մելիքներին և իր աթոռը հաստատեց նաև Պայաղ, ապա Շահբուլագ վայրերում, այնուհետև 1789 թ. այդ տեղը գրավեց իր աներ Շահնազար Մելիքից և կառուցեց ամուր բերդը՝ պարսիկներից պաշտպանվելու համար: Բերդը կոչվեց Փենապատ, որտեղ դրամ կտրեց իր անունով….Երբ այստեղ տեղափոխեց գյուղի բնակիչներին, բնակավայրն

---

[1] *Նույն տեղում, էջ 47 :*

[2] *Նույն տեղում, էջ 63-64 :*

[3] *Տե՛ս **Առաքելյան-Բալայան**,Արցախը 19-րդ դարի գրականության մեջ և մշակույթում, մաս 1, Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2004, էջ 134-135 :*

ստացավ նրանց գյուղի անունը (Շուշի): 1790 թ. Փանահին հաջորդեց նրա որդի Իբրահիմը….»[1]:

Հեղինակը գույներ չի խնայում նկարագրելու Խաչենի իշխանների, հոգևոր այրերի հայրենասիրական, շինարարական արարումները, աստվածահաճո վարքը գովաբանելու, նրանց անունը փառաբանելու ուղղությամբ. «Եվ այդ ժամանակամիջոցում կառուցվեցին երկրի սուրբ վանքերը, որոնց գլուխը կանգնեցին անվանի և իմաստուն մարդիկ, որոնցից ոմանք գնացին Գուգարքի կողմերը և դարձան մեծահամբավ Հաղպատի աթոռի առաջնորդներ, ինչպես, օրինակ, Բարսեղը ԺԲ դարում և Հովհանիսյանները ԺԳ դարում, ուր գնաց և Տեսումեն Խաթունը և կառուցեց Տիրամոր եկեղեցին »[2]:

Ալիշանը հիացմունքով է խոսում ժամանակաշրջանում (XIII դար) մեծամեծ գործերով փառավորված Հասան Ջալալի ու նրա տիկնոջ, Բաղաց թագավորի թոռան՝ Մամքանի մասին. «Սրանց եղբորորդի Հասանը՝ փաղաքշաբար Ջալալ-Դոլ կոչվածը, Խաչենի իշխանների մեջ անվանի եղավ, փառքով և շինարարությամբ աչքի ընկավ Գանձասարում, որի արձանագրության մեջ նրան և նրա հորը թագավոր են անվանում»[3]: «Ինքնակալ արքա Արցախական աշխարհի». այսպես է անվանված Հասանը Ջալալն՝ իր իսկ կողմից կառուցված Գանձասարի արձանագրության մեջ. Գանձասարի կառուցումն ավարտվել ու նավակատիքն կատարվել է 1238-39թթ.:

XIII դարում մոնղոլ-թաթարները սփռվեցին չորս կողմ՝ հանց մորեխներ, հասան ու Արցախի այլ գավառների հետ ավերեցին նաև Խաչենը…Իմաստուն Ջալալ իշխանը, առաջինը նեղվելով թաթարներից, քաղաքական խելամիտ քայլով ռազմական դաշինք կնքեց Չարմաղան զորավարի եղբոր՝ Ջոլայի հետ, իսկ իր դուստր Ռուզան-Ռուզուքանին կնության տվեց Չարմաղանի և հավատով քրիստոնյա Ելթինա խաթունի որդուն՝ Բուրա Նույինին: Կ. Գանձակեցին Հասան Ջալալին «բարեպաշտ» է անվանում՝ անտեսելով նրա հարենասիրական ջիղը: Երեք անգամ թաքուն մասնակցելով թաթարների դեմ բարձրացված ապստամբությանը՝ երրորդ անգամ բռնվում և արյունարբու Արղունի հրամանով 1261 թ. Ղազվինում, առանց հապաղման, մահվան է դատապարտվում (Արղունը աճապարեց, քանզի համոզված էր, որ Ջալալի դուստր Ռուզուքանը՝ թաթար մեծ զորավար Չարմաղանի հարսը, չէր վարանի աճապարել՝ հորն ազատելու հնարավոր մահացու վտանգից): Կ. Գանձակեցին, Չամչյանը, ինչպես նաև

---

[1] ***Ալիշան Ղևոնդ***, *Արցախ, էջ 63-64 :*
[2] *Նույն տեղում, էջ 63-64 :*
[3] *Նույն տեղում, էջ 64 :*

Ալիշանը, չեն նշում Զալալի սպանության պատճառը. այս մասին այլ աղբյուներ են նշում[1] (Մանգու խանի մահը (1259թ.) խառնում է մոնղոլական արքունիքը. անդրկովկասյան մի շարք ազատասեր իշխաններ, այդ թվում նաև Խաչենի փառքով, շինարարությամբ պսակված, հզորազոր մելիք Հասան Զալալը (երրորդ անգամ), Զաքարե Զաքարյանը՝ Շահնշահ Զաքարյանի որդին, և մեծ ամիրսպասալար Զաքարեի թոռը և ուրիշ իշխաններ թաքուն ապստամբության դրոշ են բարձրացնում մոնղոլական տիրապետության դեմ և… անհաջողության մատնվում) : Ազնվազարմ, հայրենասեր իշխանի մարմինը կտոր-կտոր են անում՝ նետելով վայրի կենդանիների առջև. որդուն՝ Աթաբեկին, դժվարությամբ է հաջողվում, կաշառելով մարդկանց՝ Ղազվինում նահատակված հոր նշխարները հավաքել, բերել Գանձասար՝ հայրենի սրբավայրին պահ տալ:

Հետևենք Ալիշանի՝ անհուն ցավով արված շարադրանքին. «Այս Զալալը, առաջինը նեղվելով թաթարներից, աստվածային ողորմություն գտավ, և Սարդախ խանը նրան վերադարձրեց Չարաբերդը, Ականան, Կարկառը, որոնք գրավել էին իրենից: Բայց բանսարկու մարդկանց միջոցով նա հանձնվում է Արղուն խանի ձեռքը: Մինչ նրա դուստր Ռուզուքանը՝ ոմն Բոր (**Բուրա Նուին. մեծ զորավար Չարմաղանի և հավատով քրիստոնյա Ելթինա խաթունի որդին,** ընդգծ.՝ Զ. Բ.) թաթար իշխանի կինը, աշխատում էր փրկել նրան, անօրենները շտապեցին չարաչար մահվամբ սպանել բարյացապարտ մարդուն, 1261 թ.: Եվ նրա որդի Աթաբեկը բերել տվեց նրա նշխարված մարմինը և թաղեց Գանձասարում»[2]:

Հեղինակը վիպական շնչով գովաբանում է Խաչենի իշխանների քաջակորով վարքը, չվհատվող բնույթը, նրանց էությունը, պայքարող ոգին, բնավորությունն ու խառնվածքային արիական գծերը՝ «հզոր, զորավոր ու կորովի, փառահեղ, մեծահանճար» և այլ մակդիր-համեմատություններով պատվելով-գնահատելով նրանց, որոնք հայրենի եզերքների պաշտպանության համար որպես պատնեշ, Ուտիքի իշխանների հետ միանալով, հզոր բռունցք կազմեցին, կենաց ու մահու պատերազմի ելան՝ ընդդեմ թուրքերի (վերջիններս 1579/1580 թթ. թալանի, ավերի ենթարկեցին Խաչենն ու Չարաբերդը) և պարսիկների.

128. «Բայց հզոր և իշխանավոր մարդիկ չպակասեցին Խաչենի տնից և հետագա դարերում. Սյունյաց մելիքների հետ միասին մինչև մեր դարը նրանք գրավեցին վիճակների ու գյուղերի վերակացությունը:

---

[1] *Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1961, էջ 75-76 :*

[2] ***Ալիշան Ղևոնդ**, Արցախ, էջ 64 :*

Լեկերը 1722 թ. արշավեցին Ուտիք և հասան մինչև Խաչենաձոր՝ ավարի ենթարկելով երկիրը, մեծ վնաս պատճառեցին: Մեկ տարի անց խաչենցիները, միանալով Ուտիքի կողմերի բնա-կիչների հետ, կանգնեցին օսմանցիների և պարսիկների դեմ: Եվ «Ժը դարի վերջերին, բռնակալ Փանա խանի օրոք, ինքնագլուխ իշխանությամբ փառավորվում էին Հովսեփ Մելիքը և նրա որդի Բեկլարը՝ զորավոր և կորովի մարդիկ, և նրանց նման Ադամ Մելիքը, որը նրանցից էլ առաջ անցավ փառքով ու հերոսությամբ, և որի մեծաշեն վիմատաշ ապարանքները մինչև օրս կանգուն կան գավառի տարբեր կողմերում: Մելիք Շահնազարը՝ մեծահանճար և քաղաքագետ մի մարդ և ուրիշները՝ Մելիք Ալլավերդին, Մելիք Բաղրամը, Մելիք Եսային, Մելիք Միրզախանը, մնացին պարսից հպատակության տակ: Նրանց սերնդից ոմանք և այժմ պատվի են արժանանում ռուսաց դռանը»[1]:

Ալիշանն, առանձնակի ուշադրություն է դարձնում Արցախի գետերի ուղղությանը, բնույթին, նրանց համանման բնական դիրքին, անվանակոչության բացատրությանը, միաժամանակ հետևելով պատմիչների հաղորդած տեղեկություններին՝ անդրադառնում է նաև բնական երևույթներին՝ տեղացող աղետներին, որոնց նկարագրությամբ ընդհանրացվում է ժամանակաշրջանի կոլորիտը. «Արցախի և Ուտիքի այլ գետերի նման…., Գանձասարի և Շահթախտի լեռներից իջնող…. Խաչենագետն էլ ձորերով է իջնում, որի հետևանքով էլ այդ մասը **Խաչենաձոր** է կոչվում: Մեր նախնիներից Կիրակոսը հիշում է, թե ինչպես 1240թ. Խաչենում սարսափելի ու խոշոր կարկուտ է տեղում, որի հետ էլ թզաչափ ձկներ են թափվում, որ «մենք մեր աչքով չտեսանք, ասում է, բայց շատերը կային և հավաստիացնում էին, թե իրենք ականատես են եղել»[2]:

130. Մեծիրանք-Կսապատ

Ալիշանը խաչենցիների հին օրրանն է համարում Արցախի հայտնի գավառներից **Մեծիրանքը**, որը գտնվում է Խաչենագետի ու նրա վտակ Քոլատակի միջև՝ կառուցված բարձր բլուրի վրա: **Մեծիրանքը** կամ **Մեծյուրյանքը-Մեծարունիքը**, հայտնի է իր եպիսկոպոսական հին աթոռով՝ Ս. Հակոբի մենաստան-վանքով, որի հոգևոր առաջնորդները հիշատակվում են Զ դարից:

131. Ըստ աշխարհագիրների՝ Տրտուի ջրբաժանի սկզբում՝ երկու գյուղերի՝ Ուլու-ղարաբեկի և Քյուչուկ-ղարաբեկի (այսինքն՝ Մեծ ու Փոքր)

---

[1] *Նույն տեղում, էջ 67-68 :*

[2] *Նույն տեղում, էջ 68, **Գանձակեցի Կիրակոս**, էջ 321:*

հարավում է գտնվում Կսապատ կամ Քասաբադ մեծ ավանը: Ալիշանը, կարևորելով վերջինիս դերը լեռնաշխարհում, վիպական գծերով է կերպավորում մեծ ավանը՝ գրելով. «….Հեռվից շրջապատված լեռներով, իսկ մոտիկից՝ այգիներով. այն գեղեցիկ մի վայր է, ինչպես **ես կարծում եմ** ոռոգվող Չղախ գետով, որը տոթակեզ ամռանը շողում է լեռների շուրջը: Ունի գեղեցկաշեն եկեղեցի՝ բարձրացած չորս սյուների վրա, կառուցված 1686 թ.»[1]:

135. Մեծիրավանքի արձանագրությունները:

Մեծիրավանքի վանքի արձանագրություններում բարձրատոհմիկ անձանց, արքաների, իշխանների կողմից եկեղեցական համալիրների, հոգևոր կենտրոնների համար կատարված նվիրատվությունների հետաքրքիր շարք կա, ինչը խոսում է նրանց հոգևոր պարտականությունների և բնավորության գծերի մասին, որոնցից կարելի է նշել ՉԱ թ. Դեսրումյան ցեղից թագավորող Հասան Ջալալ-Դոլային, Ջալալ-Դոլայի տիկին՝ Սյունյաց Բաղաց թագավորի թոռ Մամքան թագուհուն, Սահլ Սմբատյանի որդի Ատրներսեհին՝ Հաթերքի, Հանդաբերդի, Խաչենաբերդի, Հավախաղացի տիրոջը, մեծ իշխան Ջալալի որդի Հովհաննես կաթողիկոսին, Հեջուբի որդի Սմբատին և շատ ու շատ այլոց [2]:

Օրինակ՝ Մեծիրավանքի վանքի արձանագրություններից.

Գ. …. «Ջալալի հրամանով ես՝ Վահրամս, Հասանը, Սմբատի որդիները մեր հոգու համար Ծաղատեղի համար հողը տվեցինք Մծբինի աթոռին: Տեր Վարդանը և միաբաններս Հասանի, Սմբատի, Թամարի համար ժառանգություն տվեցինք. Ով հողը խլի և ժամերգությունը խաբանի, ՅԺԸ (318) հայրապետների կողմից թող նզովվի»[3]:

Ը. «Ես՝ Խաչենի տեր Վախտանգի որդի Զաքարես, Կոռի երկիրը տվեցի Մեծիրանքի սուրբ նշանին, եւ սրանք Վարդավառի տոնի ժամանակ ժամերգություն տվեցին ինձ եւ իմ տիկին Արղու Խաթունի համար. ով խափանի ժամերգությունը, թող դատապարտվի Աստծու կողմից»[4]:

Ալիշանը, հետևելով պատմիչների վկայություններին, բազմիցս հիշատակելով ԺԳ դարում հանդես եկող, Գանձասարի արձանագրության մեջ ինքն իրեն Խաչեն աշխարհի ինքնակալ արքա համարող իշխան Հասան

---

[1] ***Ալիշան Ղևոնդ***, *Արցախ, էջ 70 :*
[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 77-82 :*
[3] *Նույն տեղում, էջ 78 :*
[4] *Նույն տեղում, էջ 78 :*

Ջալալին՝ բնութագրելով վերջինիս բնավորության ակնառու գծերը, առանձնապես նշում է նրա բարեպաշտությունը՝ երկրորդական պլան մղելով հայրենասիրությունը, տալիս իշխանի տարաբնույթ հարաբերությունների առանցքները, մեկնաբանում նրա գործունեության լայն շրջանակները, ընդգծում հանճարեղ շինարարական մտահղացումները, մոնղոլ-թաթարների հետ ունեցած ռազմաքաղաքական հարաբերությունները, կնքած ռազմական դաշինքը, որպես բարձրաստիճան անձ՝ իշխանավոր, հնարավորիս ներկայացնում նրա կերպարի ամբողջական նկարագիրը:

Այսպիսով՝ Ալիշանի երկում, Հասան Ջալալի կերպարի բացահայտմամբ, քաղաքական ընդհանուր ֆոնի վրա ներկայացվում է Արցախ աշխարհի, մասնավորապես Խաչենի վիպապատմական նկարագիրը, բացվում բարդ ու որոգայթներով լի ժամանակաշրջանի դեմքը:

Միջնադարյան Արցախի մշակութային հոգևոր հանճարեղ կոթող հանդիսացող Գանձասարի կառուցման մասին իր մտասևեռումները շարադրելով՝ Ալիշանը գտնում է, որ եկեղեցին, ըստ Օրբելյանի մեկնության, հայտնի է դեռևս Ժ դարի կեսից, հիշվում է «Անանիա կաթողիկոսի Գանձասարի եկեղեցի գալու առթիվ»[1]:

Գանձասարի եկեղեցին, որ Ալիշանը համարում է Աղվանից տան հետագա դարերի կաթողիկոսարանը, իր անունը ստացել է Խաչենի գետափին գտնվող հռչակավոր և նշանավոր Գանձասար գյուղի անունից, որն ընկած է Գանձասար լեռան հարավային լանջին:

Հեղինակը, Գանձասարի եկեղեցու կառուցման գործում ընգծելով Հասան Ջալալի դերը, ավելացնում է. «Եվ որովհետև այն Ջալալի նախնիների գերեզմանատունն էր, և նրա հայրը կտակով պատվիրել էր նրան՝ եկեղեցի շինել գերեզմանի վրա, և ինքը Ջալալ-դոլը, կամեցավ պայծառացնել վանքը, այդ տեղը նորոգեց և մի հոյակապ եկեղեցի շինեց 1226-1238 թթ., որպես և ինքը արձանագրում է ճոխ ու գեղեցիկ խոսքերով….» [2]: Գանձասարի եկեղեցու բացումը տեղի ունեցավ 1238-39 թթ.՝ հրավիրված հայ և օտար հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան անձանց մասնակցությամբ և ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ:

Աղվանքի կաթողիկոսական տան վերջին ներկայացուցիչներից՝ կաթողիկոսներից ու առաջնորդներից, միաբաններից շատերը, քննաբանի մեկնաբանմամբ, Ջալալի սերնդից էին: Աղվանքի կաթողիկոսական տան

---

[1] *Հմմտ.* ***Օրբելյան Ստեփանոս****, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 22*

[2] ***Ալիշան Ղևոնդ****, Արցախ, էջ 85 :*

ճյուղագրությունը տալով՝ Ալիշանը վերջնամասում նշում է. «….Սարգիս Բ-ն՝ աթոռի հակառակորդը, 1794, որի ժամանակ, 1815 թ., վերացվեց Աղվանքի կաթողիկոսության անունը և տվեց մետրոպոլիտի աստիճան: 1838 թ. նրան հաջորդեց Բաղդասար Հասան-Ջալալյանը, որը արքեպիսկոպոսական աթոռը տեղափոխեց Շուշի» [1]:

Գանձասարի արձանագրություններում նշվում են մոտավորապես 30 բնակավայրեր՝ գյուղեր ու ագարակներ, սրբատեղիներ, հանքատեղեր: Փորձելով տալ Գանձասար անվան ստուգաբանությունը՝ հեղինակն այն բացատրում է հետևյալ կերպ. «Այդ անունը ստուգաբանում եմ այսպես՝ **Գանձա-սար՝ արծաթի գանձաշահ հանքերի շնորհիվ,** որոնք երբևէ արդյունահանվում էին այնտեղից….Ըստ երևույթին հանքի կողմերում էր գտնվում **Արծաթենիս** [2] գյուղը, որը հիշատակված է մեծն Ջալալ-դոլի արձանագրություններում և վանքի պարգևագրերում: Սպասելի է, որ այնտեղ կարող են լինել և այլ մետաղահանքեր, որովհետև Գանձասարը հիշվում է Ժ դարից, հետևաբար շատ վաղուց հանքը հայտնի էր: Եվ այն Խոչքարի գավառի հանքերի հետ միասին Արցախի և Աղվանքի հարստության աղբյուրն է կազմում» [3]:

Արցախի ահասարսուռ լեռներն ու անդնդախոր ձորերը հաճախ էին իրենց ժողովրդին փրկում թշնամիներից՝ ապաստարան դառնալով: Այդ իսկ պատճառով Բուզանդը երկիրը անվանել է **«***Արցախամուր***»:** «Լեռան ամրության պատճառով ապահովված է վանքի (**Գանձասարի**, ընդգծ.՝ Զ. Բ.) պաշտպանությունը թշնամիների հարձակումներից» [4],- նշում է Ալիշանն՝ իր հերթին ցույց տալով Արցախի լեռների տոկունությունը՝ վտանգի ժամին, մոր նման ժողովրդին իր գրկում պատսպարելու զորավոր հատկությունը:

Ինչպես Ալիշանի այլևայլ բնույթի երկերը՝ հայագիտության գանձարանի չխամրող կոթողները, նույնպես «Արցախ»-ը շարադրված է անսխալ, խորագետ և բազմավաստակ, մեծ գիտնականի նույնքան մեծ պատասխանատվությամբ, չնայած այն բանին, որ հեղինակը երբեք չի եղել Հայաստանում և նրա անբաժանելի մաս կազմող Արցախում, բայց կատարել է բարձրարժեք, արցախագիտական մտքին համահունչ գիտական սխրանք:

---

[1] *Նույն տեղում, էջ 89 :*

[2] ***Աշխատանքում առկա մգացված խոսքերի այս և այլ նախանշված տարբերակներն Ալիշանինն են, որոնք ըստ հարկի պահպանել ենք :***

[3] *Նույն տեղում, էջ 90-91 :*

[4] *Նույն տեղում, էջ 91 :*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **ա) բնագրեր-սկզբնաղբյուրներ**

1. Գանձակեցի Կիրակոս, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961:
2. Ալիշան Ղևոնդ, Արցախ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1993,124 էջ :
3. Գոշ Մխիթար, Գիրք դատաստանի, Երևան, 1975 :
4. Օրբելյան Ստեփանոս, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, Փարիզ, 1859 :
5. Վարդան Վարդապետ, Աշխարհացոյց, Փարիզ, 1960 :

բ) տեսաքննական աղբյուրներ

1. Առաքելյան-Բալայան Զ., Արցախը XIX դարի գրականության մեջ և մշակույթում, մաս Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագէտը» պատմավեպը, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 2004, 352 էջ:
2. Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1961:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը: